## Արձանագրություն 3

**«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի**

ք. Երևան «16» ապրիլի 2021թ.

ժամը՝ 13:00

Մասնակցում էին՝

**Նախագահ՝**

Պետրոս Մանուկյան

**Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ**

Զարուհի Բախշյան

Մարի Ստեփանյան

**Քարտուղար՝**

Երանուհի Սարգսյան

### Օրակարգ

1. **Ընթացակարգի գնահատում**

1.1 «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/18» ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 18-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում առաջարկվել էր 14x40սմ, հրավերում պահանջվել էր 30x43սմ, 29-րդ չափաբաժանում առաջարկվել էր 1մ(30+/-2գ/մ), իսկ հրավերում պահանջվել էր 32-ից ոչ պակաս խտություն:

«Ջիարջի» ՍՊԸ-ի, «Էֆբիէյ» ՍՊԸ-ի, «Արջիջի» ՍՊԸ-ի, «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում /Հավելված 1.1/ բոլոր չափաբաժինների մասով նշված էին մեկից ավելի արտադրողներ և բացակայում են առաջարկվող ապրանքների մակնիշները:

Ուստի գնահատող հանձնաժողովը որոշել էր մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել վերոգրյալ մասնակիցներին շտկել առկա անհամապատասխանությունները:

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են առկա անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0***

1.2 Հաշվի առնելով, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, 2021թ. ապրիլի 21-ին, ժամը 15:00-ին, հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը բավարարած մասնակիցները հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա Նոր Նորքի 3-րդ միկրոշրջան, Գյուրջյան փող., 10 շենք հասցեում:

Մինչ նշված ժամը բանակցային գնային առաջարկը կարող է ուղարկվել yeranuhi.sargsyan@sglmc.am էլեկտրոնային հասցեին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0***

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _______________ Պ. Մանուկյան

հանձնաժողովի անդամներ՝ _______________ Զ. Բախշյան

_______________ Մ. Ստեփանյան

Գնումները համակարգող՝ _______________ Ե. Սարգսյան